Հաստատված է
ԵՊՀ Գիտական խորհրդի
2007թ. հունիսի 28-ի թիվ 5 նիստում:
ԳԽ նախագահ՝ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ
«29» 06 2007թ.

# ՀԱՅԵՑԱԿԱՐԳ
# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՄԱՆ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հետբուհական լրացուցիչ կրթությունը (այսուհետ՝ ՀԼԿ) սահմանվում է «Կրթության մասին» ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով:
2. ՀԼԿ-ն միտված է բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող անձանց կրթության շարունակականությունն ապահովելուն, հիմնական կրթական ծրագրերից դուրս նրանց կրթական պահանջմունքները բավարարելուն ու մասնագիտական գիտելիքները նորացնելուն, գործարար որակները կատարելագործելուն և նոր աշխատանքային գործառույթների կատարմանը նախապատրաստելուն:
3. ՀԼԿ-ն իրականացվում է չորս կրթական ծրագրերով՝ որակավորման բարձրացում, մասնագիտական վերապատրաստում, ստաժավորում և կրթական ծառայություն:
4. ՀԼԿ ծրագրերով ուսուցման են ընդունվում հենքային բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող անձինք՝ հիմնական կրթական մակարդակին (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս և այլն) համապատասխան: Պահանջվող մակարդակից ցածր կրթական ցենզ ունեցող անձը տվյալ ծրագրում ընդգրկվում է որպես ազատ ունկնդիր:
5. ՀԼԿ-ն իրականացվում է ԵՊՀ-ում գործող կրթական ծրագրերի բովանդակությանը համապատասխան՝ տարբերակված ծրագրերով, ուսուցման առկա, հեռակա, համակցված և հեռավար ձևերով (այդ թվում՝ անհատական ուսուցմամբ), անվճար և վճարովի հիմունքով, պայմանագրային կարգով: Պայմանագրերը կնքվում են մի կողմից ԵՊՀ-ի և մյուս կողմից գործադիր իշխանության, բնակչության զբաղվածության ծառայության մարմինների, իրավաբանական ու ֆիզիկական այլ անձանց միջև: Ուսման վարձի չափը սահմանվում է ռեկտորի հաստատած կարգի համաձայն:
6. ՀԼԿ ծրագրերով ուսումնառողները համարվում են ունկնդիրներ, որոնց վրա տարածվում են ԵՊՀ կանոնադրությամբ սովորողի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:
7. Ունկնդիր ձևակերպվելու համար այլ կազմակերպությունից գործուղվող անձը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.
   - դիմում (դասախոսը՝ տեղեկանք-ներկայացում),
   - մասնագիտական կրթության մասին փաստաթղթի պատճենը,
   - գործուղման թերթիկ,
   - պայմանագիրը և վճարման ծանուցագիրը (վճարովի հիմունքով սովորելու դեպքում),
   - անձնագիրը և 2 լուսանկար:
8. Կրթական ծրագրերն իրականացվում են ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով: Պատվիրատուն կարող է մասնակցել կրթական ծրագրի բովանդակության

ձևավորմանը և ընտրել անհատական ու կամընտրական ուսուցման առարկաներ, առաջարկել ուսուցման այլ ժամկետ ու ժամաքանակ: Կիրառվում են ԵՊՀ-ում սահմանված ուսուցման հիմնական տեսակները՝ դասախոսություն, գործնական (սեմինար) ու լաբորատոր պարապմունքներ, խորհրդատվություն, ուսումնական և արտադրական պրակտիկա: Ծրագրերի իրականացմանը ներգրավվում են առաջատար գիտնականներ և մասնագետներ:

9. Ունկնդիրների գիտելիքների մակարդակը գնահատվում է ընթացիկ ստուգման ու ամփոփիչ ատեստավորման /քննություններ, ստուգարքներ/ արդյունքներով և ավարտական աշխատանքի պաշտպանությամբ: Ամփոփիչ ատեստավորումն անցկացնելու համար ռեկտորի հրամանով ստեղծվում է հանձնաժողով:
10. ՀԼԿ ծրագրերն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է ԵՊՀ-ի կողմից սահմանված նմուշի ավարտական փաստաթուղթ (հավաստագիր, վկայական): Չավարտողներին տրվում է տեղեկանք ուսումնառության մասին. ավարտական փաստաթուղթ ստանալու համար նրանք կրկին կարող են դիմել ուսումնառությունն ավարտելուց հետո հինգ տարին չլրացած:
11. Բարձրագույն մասնագիտական կրթություն չունեցող անձինք նույնպես կարող են ստանալ լրացուցիչ կրթություն՝ կա՛մ որպես ազատ ունկնդիր մասնակցելով գործող մասնագիտական դասընթացներին, կա՛մ որպես լրիվ ունկնդիր՝ առարկայական և միջառարկայական այլ ծրագրերով:
12. ՀԼԿ-ն կազմակերպվում, համակարգվում և վերահսկվում է ՀԼԿ վարչության կողմից: Ծրագրերն իրականացվում են ֆակուլտետների միջոցով: Ուսումնական աշխատանքներում ընդգրկված ԵՊՀ դասախոսները վարձատրվում են ըստ ուսումնական բեռնվածության կամ ժամավճարով:
13. ՀԼԿ ծրագրերի բովանդակային հարցերը քննարկվում են ԵՊՀ մեթոդական խորհրդում և ըստ մասնագիտությունների՝ համապատասխան ֆակուլտետի խորհրդում: Ծրագրերի խորհրդատվությունն ապահովում են ֆակուլտետների համակարգողները: Ծրագրերի ղեկավարները պատասխանատվություն են կրում բովանդակային մասով:

## ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

### 1. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

1.1. Որակավորման բարձրացման /այսուհետ՝ ՈԲ/ նպատակը մասնագետների տեսական և գործնական գիտելիքների համակարգումը և նորացումն է՝ կապված նրանց որակավորման մակարդակին ներկայացվող պահանջների բարձրացման և մասնագիտական խնդիրների լուծման ժամանակակից մեթոդների յուրացման անհրաժեշտության հետ:

1.2. ՈԲ-ն իրականացվում է երկու կրթական ծրագրերով.

- կարճաժամկետ (72 -- 100 ժամ).
- միջնաժամկետ (100 ժամից ավելի):

Առաջին ծրագիրը նախատեսում է գիտության, տեխնիկայի, տեխնոլոգիայի, սոցիալ-տնտեսական և այլ հիմնախնդիրների վերաբերյալ որոշակի թեմատիկ ուսուցում, երկրորդը՝ նույն հիմնախնդիրների վերաբերյալ խորացված ուսուցում:

1.3. Ծրագրի յուրացումն ավարտվում է ստուգարքով (սահմանված դեպքում՝ նաև քննությամբ) և ավարտական աշխատանքի պաշտպանությամբ: Ավարտողները ստանում են հավաստագիր (առաջին ծրագրով) կամ վկայական (երկրորդ ծրագրով):

1.4. ՈԲ-ն կազմակերպվում է ունկնդիրների երեք կարգի համակազմի համար՝ դասախոսների, բուհերի ղեկավար ու վարչական կազմի և մասնագետների: Ընդ որում, ԵՊՀ դասախոսների և մյուս աշխատողների ՈԲ-ն անցկացվում է ամբողջ աշխատանքային գործունեության ընթացքում՝ ոչ պակաս, քան 5 տարին մեկ անգամ, անվճար հիմունքով (հավելված 1): Պայմանագրային ուսուցման դեպքում ՈԲ-ի պարբերականությունը որոշում է գործատուն:

### 2. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

2.1. Մասնագետների վերապատրաստման /այսուհետ՝ ՄՎ/ նպատակը նրանց կողմից լրացուցիչ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումն է կրթական ծրագրերով, որոնք նախատեսում են գիտության, տեխնիկայի ու տեխնոլոգիայի առանձին բաժինների և առարկաների ուսումնասիրում՝ հարմարվելու նոր տնտեսական ու սոցիալական պայմաններին և վարելու նոր մասնագիտական գործունեություն, ընդ որում, հաշվի առնելով նաև միջազգային պահանջները և չափանիշները:

2.2. ՄՎ-ն իրականացվում է երկու կրթական ծրագրերով.

- կարճատև (մինչև 500 լսարանային ժամ),
- տևական (500 լսարանային ժամից ավելի):

Երկրորդն իր հերթին իրականացվում է երկու ենթածրագրով.

- վերաորակավորում (ավելի քան 500 լսարանային ժամ),
- լրացուցիչ որակավորման շնորհում՝ ստացած մասնագիտության հիման վրա (ավելի քան 1000 լսարանային ժամ):

2.3. Առաջին ծրագրի յուրացումն ավարտվում է ստուգարքով, երկրորդինը՝ նախադիպլոմային պրակտիկայի անցումով, ամփոփիչ քննությունների հանձնումով և ավարտական աշխատանքի պաշտպանությամբ: Շրջանավարտներին տրվում է ԵՊՀ-ի կողմից սահմանված նմուշի ավարտական փաստաթուղթ (վկայական, հավաստագիր), որը նրանց մասնագիտական աշխատանքի իրավունք է տալիս:

## 3. ՍՏԱԺԱՎՈՐՈՒՄ

3.1. Ստաժավորման հիմնական նպատակը տեսական պատրաստությամբ ձեռք բերված մասնագիտական գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ձևավորումը և ամրապնդումն է պրակտիկայում: Այն իրականացվում է նաև առաջավոր փորձի ուսումնասիրման և պաշտոնեական պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ մասնագիտական ու կազմակերպչական հմտությունների ձեռքբերման նպատակով:

3.2. Ստաժավորումն իրականացվում է երկու կրթական ծրագրերով.

- անհատական ստաժավորում (1— 10 ամիս ժամկետով),
- խմբային ստաժավորում (մինչև 1 ամիս ժամկետով):

Անհատական ստաժավորումը կազմակերպվում է ՈԲ-ի կամ ՄՎ-ի ծրագրով: Խմբային ստաժավորումն անցկացվում է մասնագետների որակավորումը բարձրացնելու նպատակով՝ տվյալ բնագավառի կամ հիմնարկի մակարդակով ծագած գիտական, մանկավարժական, սոցիալ-տնտեսական և այլ հիմնախնդիրների գծով: Ստաժավորման տևողությունը սահմանվում է գործատուի կողմից:

3.3. Ստաժավորումը կարող է լինել ինչպես լրացուցիչ մասնագիտական կրթության ինքնուրույն տեսակ, այնպես և ՈԲ-ի կամ ՄՎ-ի ուսումնական պլանի բաղադրիչ: Երկրորդ դեպքում ունկնդիրը ներկայացնում է նաև ավարտական աշխատանք:

3.4. Ստաժավորումն ավարտողները ներկայացնում են հաշվետվություն սահմանված կարգով՝ հաստատված ամբիոնի կողմից:

## 4. ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

4.1. Կրթական ծառայության (այսուհետ՝ ԿԾ) նպատակը անձի կրթական ցանկացած նեղ պահանջմունքի բավարարումն է՝ գործնական տարբեր դասընթացների ձևով:

4.2. Ավարտողները ստանում են ԵՊՀ-ի կողմից սահմանված նմուշի հավաստագիր:

Հավելված 1

**ԵՊՀ դասախոսների որակավորման բարձրացում**

1. ԵՊՀ դասախոսների ՈԲ-ն իրականացվում է ամբիոնների ու ֆակուլտետների ներկայացմամբ կազմված և ռեկտորի կողմից հաստատված հնգամյա հեռանկարային պլանի հիման վրա (հավելված 2):

2. ԵՊՀ յուրաքանչյուր դասախոսի համար նախատեսվում է որակավորման բարձրացման անհատական քարտ, որը լրացնում են ամբիոնի վարիչը և դասախոսը, ստորագրում են ֆակուլտետի դեկանը և հետբուհական կրթության վարչության պետը (հավելված 3):

3. Դասախոսների լրացուցիչ կրթության տեսակներն են՝ ՈԲ, վերապատրաստում, ստաժավորում, ստեղծագործական արձակուրդ, ատենախոսության պաշտպանություն, գիտաուսումնական գործուղում, մասնակցություն սեմինար-խորհրդակցության (2-3-շաբաթյա՝ բուհի ղեկավար կազմի համար), դասագրքի (ձեռնարկի) ստեղծում և այլն:

4. Ուսուցման ձևերն են՝ աշխատանքից չկտրված, կտրված, մասնակի կտրված և անհատական պլանով:

5. Անհատական պլանով ուսուցումը իրականացվում է երկու ձևով՝ աշխատանքից կտրված և չկտրված: Առաջին ձևով ՈԲ անցնողները մեկ կիսամյակով ազատվում են բեռնվածությունից՝ դասագիրք, ձեռնարկ կամ ֆակուլտետի խորհրդի հանձնարարությամբ ուսումնամեթոդական այլ աշխատանք կատարելու պայմանով: Երկրորդ ձևով ՈԲ անցնողները պարտադիր կարգով լսում են 2-3 դասընթաց, իսկ ներկայացրած ավարտական աշխատանքը երաշխավորվում է ֆակուլտետի խորհրդի կողմից: Ունկնդիրները կրթական ծրագիրն ավարտում են ուսուցման անհատական պլանի կատարման մասին հաշվետությամբ:

6. Ստաժավորում անցածները ներկայացնում են ստաժավորման վայրից գիտական ղեկավարի կարծիքը և ստաժավորման պլանի կատարման մասին հաշվետությունը՝ հաստատված ամբիոնի նիստում:

7. Արտասահմանում ՈԲ անցածները ներկայացնում են հաշվետություն՝ հաստատված ֆակուլտետի խորհրդի կողմից:

Հավելված 2

---------- ՖԱԿՈՒԼՏԵՏ ---------- ԱՄԲԻՈՆ

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ 2007 — 2012 ԹԹ. ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՊԼԱՆ

| Հ/հ | Լրացուցիչ կրթական ծրագրի անվանումը | Դասախոսների ընդհանուր թիվը | Դասախոսների բաշխումն ըստ ուսումնական տարիների | | | | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 2007/ 2008 | 2008/ 2009 | 2009/ 2010 | 2010/ 2011 | 2011/ 2012 | |
| 1. | Որակավորման բարձրացում.<br>ա) ընդհանուր հիմունքով<br>բ) անհատական պլանով (բեռնվածությունից չազատված)<br>գ) անհատական պլանով (բեռնվածությունից ազատված) | | | | | | | |
| 2. | Մասնագիտական վերապատրաստում | | | | | | | |
| 3. | Ստաժավորում | | | | | | | |
| 4. | Այլ (ստեղծագործական արձակուրդ, ատենախոսության պաշտպանություն, գիտաուսումնական գործուղում, մասնակցություն սեմինար-խորհրդակցության, դասագրքի ստեղծում և այլն – ընդգծել) | | | | | | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | |

---------- (ֆակուլտետի դեկանի ստորագրությունը)

---------- (ամբիոնի վարիչի ստորագրությունը)

_____ (ֆակուլտետի անվանումը)

_____ (ամբիոնի անվանումը)

# ԵՊՀ ԴԱՍԱԽՈՍԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՔԱՐՏ

(2007-2012 թթ. )

_____

(դասախոսի ազգանունը, անունը և հայրանունը)

_____

(գիտական աստիճանը, կոչումը և պաշտոնը)

Որակավորման բարձրացման ուստարին և կիսամյակը՝ _____

Լրացուցիչ կրթության տեսակը՝ որակավորման բարձրացում, վերապատրաստում, ստաժավորում, ստեղծագործական արձակուրդ, ատենախոսության պաշտպանություն, գիտառուսումնական գործուղում, մասնակցություն սեմինար-խորհրդակցության, դասագրքի (ձեռնարկի և այլնի) ստեղծում և այլն

Ուսուցման ձևը՝ աշխատանքից չկտրված, կտրված, մասնակի կտրված, անհատական պլանով

## 1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՂԱԴՐԻՉ
(ամբիոնի հանձնարարությամբ)

1. Լսել հետևյալ դասընթացները՝

ա) _____ ե) _____

բ) _____ զ) _____

գ) _____ է) _____

դ) _____ ը) _____

2. Կատարել ավարտական աշխատանք հետևյալ թեմայով_____

_____

3. Այլ առաջադրանք_____

_____

«___»_____20 թ. *Ամբիոնի վարիչ՝* _____

---

## 2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ - ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՂԱԴՐԻՉ
(դասախոսի ընտրությամբ)

1. Լսել հետևյալ դասընթացները՝

ա) _____ գ) _____

բ) _____ դ) _____

2. Այլ հանձնառություն_____

_____

«___»_____20 թ. *Դասախոս՝* _____

_____ *Հետբուհական կրթության վարչության*

*ֆակուլտետի դեկան՝* _____ *պետ՝* _____